



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

10 հետքավարի 2017 թ. № 41 - Ա/1
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի № 17-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 7-ի № 225-Ա/1 հրամանի № 1 հավելվածի 12-րդ և 23-րդ կետերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 23-ի № 13-Ա/1 հրամանով ստեղծված անկախ փորձագետների ընտրության և ատեստավորման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 9-ի նիստի № 01/17 արձանագրությունը՝ *հրամայում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2015 թվականի մարտի 16-ի № 48-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու և առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող անկախ փորձագետների ցուցակը հաստատելու մասին» № 17-Ա/1 հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հ. ԴՈՍՏՈՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2017 թվականի փետրվարի 10 -ի
N° 41 -Ա/1 հրամանի

«Հավելված
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2016 թ. փետրվարի 2-ի
N° 17-Ա/1 հրամանի


ՑՈՒՑԱԿ
ԱՌՑԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ

1.	Տիգրան Օհանյան	- Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության առաջին կարգի մասնագետ,
2.	Արթուր Փոքրիկյան	- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնի մասնագետ,
3.	Արմեն Թադևոսյան	- Երևանի պետական համալսարանի իրավաբանական բաժնի վարիչ,
4.	Լիլիթ Մկրտչյան	- Երևանի պետական համալսարանի դոցենտ,
5.	Կառլեն Խաչատրյան	- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ,
6.	Նոնա Սարգսյան	- «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության նախա- և հետթեստային խորհրդատու,
7.	Նարինե Մեսրոպյան	- Աշտարակի N° 2 հիմնական դպրոցի օպերատոր, ինֆորմատիկայի ուսուցիչ,
8.	Հայկ Մամիջանյան	- «Երիտասարդ առաջնորդների դպրոց» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
9.	Անահիտ Մինասյան	- «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի նախագահ (համաձայնությամբ),
10.	Աննա Եղոյան	- Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ (համաձայնությամբ),

11.	Արթուր Նաջարյան	- Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
12.	Արմեն Պետրոսյան	- Երիտասարդ պատմագետների ասոցիացիայի խորհրդի անդամ (համաձայնությամբ),
13.	Արսեն Սիմոնյան	- «Ստեփանավանի երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
14.	Զարուհի Լավչյան	- «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահության անդամ (համաձայնությամբ),
15.	Լուսինե Թոփլաղալցյան	- «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության Գեղարքունիքի մասնաճյուղի ղեկավար (համաձայնությամբ),
16.	Կարեն Այվազյան	- Սառնաղբյուրի համայնքային երիտասարդական նախաձեռնությունների ակումբի նախագահ (համաձայնությամբ),
17.	Կարեն Տերտերյան	- «Հայաստանի ազգային սկաուտական շարժում» հասարակական կազմակերպության երիտասարդական ծրագրերի մշակման հանձնախմբի անդամ (համաձայնությամբ),
18.	Հրաչյա Համբարձումյան	- «Մունետիկ» մանկապատանեկան մշակութային հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
19.	Սուսաննա Իսաջանյան	- Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
20.	Վարդգես Հովեյան	- Հայաստանի ուսանողական ֆորումի նախագահ (համաձայնությամբ),
21.	Արմենուհի Հովհաննիսյան	- «Ստեփանավանի երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպության անդամ (համաձայնությամբ),
22.	Հասմիկ Այվազյան	- «Ինստիգեյթ ուսումնական կենտրոն» հիմնադրամի կրթական ծրագրերի մեթոդաբան (համաձայնությամբ),
23.	Արման Ղազարյան	- «Երիտասարդ ժողնալիստների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ (համաձայնությամբ),
24.	Աննա Սմբատյան	- «Համախմբված երիտասարդություն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
25.	Անգելինա Մակարյան	- Հայաստանի հանրային հեռուստա-ռադիոընկերության խորհրդի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության սոցիոլոգ (համաձայնությամբ),

26.	Նարեկ Բոցինյան	- «Առաջընթաց» երիտասարդական հասարակական կազմակերպության խորհրդի հիմնադիր նախագահ (համաձայնությամբ),
27.	Նազելի Ավագյան	- ««Կամք» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
28.	Գևորգ Պետրոսյան	- ««Եփրատ» մերձավորարևելյան ուսումնասիրությունների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ):
29.	Ավետիք Հարությունյան	- «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
30.	Վարդուհի Արամյան	- «Հաշմանդամային սպորտի հայկական ազգային ֆեդերացիա» հասարակական կազմակերպության համահիմնադիր, քարտուղար (համաձայնությամբ),
31.	Արզուման Հարությունյան	- «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ):

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ